**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Հոդված 236. Կալանքի տակ գտնվող գույքի պահպանությունը**

2. Թանկարժեք մետաղները և քարերը, ադամանդը, օտարերկրյա տարադրամը, չեկերը, արժեթղթերը և վիճակախաղային տոմսերը պահպանման համար հանձնվում են ~~Հայաստանի Հանրապետության գանձապետարան~~ պետական ֆինանսների կառավարման լիազոր մարմնին, դրամական գումարները մուծվում են այն դատարանի դեպոզիտ, որին ընդդատյա է տվյալ գործը, վերցված մյուս առարկաները կնքվում և պահվում են այն մարմնում, որի որոշմամբ գույքի վրա կալանք է դրվել, կամ պահպանության են հանձնվում բնակարանային շահագործման կազմակերպությանը կամ տեղական իշխանության ներկայացուցչին: